



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 51

ՀԱՐԱՐ

18 ՕԳՈՍՏՈՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ



ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիսաւանիւն. 1903
ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ. — Անդամ ժիւղի. Միլան. 1906
ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԻ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՑ ԹՈՒՐԳԻՈՑ ՀԱՄԱՐ:
Գ. ՄԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացոյցներու, շորա-
ներու եւ գոհարեղեններու

ԹԻՒ 16 = ՊԱՆԶԷ-ԳԱՐՈՒ = ԹԻՒ 16

Օգտուելի-Պար հաստատութեան դիմացը

Ի Բերա, Կ'զանուի գոհարավաճառ Տ. Է. Տ. ԷՔՄԷՖՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ. 400 Մեծ-փողոց.


Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

(آ. آسادوریان) شرکت صتیبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆ Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեսի թիւ 52

Հատը 40 փարս



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
խիանգամայն մեղմաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, քայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԻՐԻՉ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՏԱՍՏԱՐԱՎՈՐՈՒՄՆԵՐ
ՇԱՐՔԱՓԱԿԱՆ

ԲԵՐԱ.

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԻՏԱՐ

Չարը Պօյու, թիւ 120 .

Կասաբայ Երախաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզդուլուի տունը:

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱՅ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» » 27 »	
Արսասանման	» » 12 ֆր.	» » 6 ֆր.	

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱԹԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ՝ կը փնտռուի, պայմանաւ որ չերաշխաւոր մը ցոյց տան և թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութիւն և կամ բաթայի փուլով՝ 20 հատը 20 ղրուլի հաշուով:



ՏԱՐԵԴԱՐԶ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ

ՀԱՄԱՅՆ ԹՈՒՐԲԻՈՅ

Թուրքիոյ մեծաժառանգ Կայսրութեան միջիռնաւոր հպատակներու սիրտք
քերկրութեամբ եւ ցնծութեամբ կը զեղու վաղը, ու իսանդաւառ խրախճանու-
թեամբ կը տօնուի մեր զբասիրտ եւ յառաջդիմաստ ՎԵՀԱՊԵՏԻՆ բարեբաւսիկ
սարեղարձն զահակաշութեան

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

Այս բարեպատեհ առթիւ Պետութեան բոլոր հպատակներն միաձայն եւ
միահամուն կ'աղօթեն առ Բարձրեայն Աստուած վասն թանկագին կենաց ՆՈՐԻՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ, Որուն զբառաս եւ բազմոյորով զահէն կը բոյսին
այն ամէն բարիքներն, որոնցմով կը շխառորուի երկիրն ու համայն ժողովուրդը:

Վաղը ամէն ոք երախտագիտական ջերմ ու անկեղծ զգացումներով տոգոր-
ուած ջերմասէս կ'աղօթէ առ Աստուած վասն արեւշատութեան մեր հպատակասէր
եւ բազմոյորով ՍՈՒԼԹԱՆԻՆ:

Հանրագիտակ՝ այս ընդհանուր մաղբանկերուն եւ աղօթքներուն կցելով
իր սրտաբան աղօթքը՝ վասն անգին կենաց եւ արեւշատութեան Նորին Կայսե-
րական Վեհափառութեան, կը գոչէ

ԿԵՅԵՔՔ, ԿԵՅԵՔՔ, ՅԱՐԷՏ ԿԵՅԵՔՔ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԵՄԱԶՈՐ ՊԵՏԱՌԹԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 51

ՇԱՐԱԹ

18 ՕԳՈՍՏՈՍ 1907

ՀԱՆՈՒՆՔ, ՀԱՆՈՒՆՔ

Ծովն կանանց համար զբոսանք մ'է:

Ծովն կանանց գեղեցկութեանց ցուցահանդէսն է: Հոն կանայք իրարու ցոյց կուտան իրենց գեղեցկութիւնը:

Տգեղ կանայք ծով չեն մտներ բնաւ, կամ եթէ երբէք մտնեն՝ իրենց հագուստն չեն հաներ:

Ամէն պարագայի մէջ ծովն որ գեղեցիկ է, գեղեցիկներու համար սահմանուած է. ես ալ չպիտի ներէի բնաւ որ տգեղ կին մը տը գեղացնէ ծովը: Ինչմեղքս պահեմ:

Գեղեցիկ կանայք ծով կը մտնեն ոչ թէ դարմանելու համար իրենց տկարութիւնն այլ հիւանդանալու համար. հերիք է որ ըսուի:

— Ինչ մարմին ունի:

Ծովը կը շողոքորթէ կիները, կ'աւելցնէ անոնց գեղեցկութեան փայլն, հարիւրապատիկ գեղեցիկ կը ներկայէ զանոնք. և կնկան մը համար ասկից աւելի ինչ հաճոյք կրնայ ըլլալ:

Շատ մը մայրեր ծովու մէջ հաւններ են աղջկան մը, իրենց հարս առած են և զըզջացած են յետոյ:

Շատ կանայք իրենց մարմինը ծովու մէջ դիտելէն ետքը տուն դարձած են և փշրած են հայելոյները:

Այսպէս է ծովն, ոչ թէ միայն գեղեցիկ է, այլ կը գեղեցկացնէ նաև զայն որ իրեն ծոցը կը մտնէ:

Կանայք միշտ կը խորհին թէ կարելիու թիւն չկա՞յ արգելօք ծովու մէջ պարահանգէս ընել:

Բայց թողունք այս խորհրդածութիւններն և մտնենք կանանց բաղնիքը:

— Սա զիմացի կէնճը որո՞ւն աղջիկն է:

— Տէր ողորմեա մայրի՛կ, չճանչցա՞ր մեր դրացիին աղջիկը չէ՞:

— Ինչ կըսես... որքան փոխուեր է. ձիւնի պէս ճերմակ կէնճ մ'էր. սեւեղեր է: Աստիի կողմը կայնողն ո՞վ է:

— Մայրիկ դուն խենդեցեր ես այսօր...
*** աղային կիներ չէ՞:

— Վայ մեղքիս... եթէ չըսէիր չպիտի ճանչնայի, գիրուկ բան մ'էր անիկայ, չէօք դարձեր է նէ... սխալ ես աղջիկս, սխալ ես Բիչ մ'անդին:

— Շապիկդ ալ մի՛ հաներ աղջիկս, չապիկովդ մտիր կը մտիս, ջուրը պաղ է:

— Մայրիկ չապիկով կը մտցուի՞:

— Ես ինչ կըսեմ նէ՝ ան ըրէ՛, դուն
նշանուած չես ասկաւին:

Քիչ մը հեռուն:

— Դուլպաներդ մի՛ հաներ աղջիկս:

— Դուլպաներով կը մտցուի՞:

— Պօթիններդ ալ հագիր ետփրուս:

— Ի՞նչ կըսեն:

— Զիվիի վրայ կը կոխես աղջիկս:

— Պիտի հանեմ:

— Հանէ՛ ու երկար մասնեղդ ցուցուր,
վախ որ աստեղ բաներ չիյտես:

Երկու մէկը ասդին:

— Սանկ նետուէ նայիմ առիւծի պէս...
ապրիս աղջիկս, ապրիս աղջիկս, համարձակ
եղիր... սանկ կռնակի վրայ լողա՛ նայիմ,
մազերդ սիրեմ... պօղ պօղ սիրեմ աղջիկ-
կըս... մաշալլահ...:

Բայց կիները զիրար չեն քաշեր, խըծը-
ծանքը կսկսի:

— Ի՞նչ մեղքս պահեմ, կըսէ մազերը
թափած տիկին մը, այսչափ երկար մազերէն
չեմ ակործիր, խաղըքի պէս մազեր...

— Պարէ աղուորս ըլլայ... միտէն ուրիշ
բան չունի:

— Հապա տուտախնէ՞րը... բաշա տու-
տախ...

— Հապա աչքի՞րը... հիչ աղուոր չեն:

— Կէն՞ է տէ ասոր համար աղուոր կըս-
ուի:

— Կէն՞ մի, յիսուն տարու կայ անիկայ:

— Հապա ակուսնէ՞րը...

— Հապա թեւերուն հաստութիւնը, հա-
մալի թեւ կը նմանի:

Զորս կանգուն անդին:

— Զմանա՞ս աղջիկս:

— Պիտի մտնամ:

— Մտի՛ր նազիկ աղջիկս:

Խժըծանքը կսկսի:

— Աս ալ հիչ միս չունի:

— Ասոր ալ մազերը երկար են: Փատի
պէս մազեր:

— Աչքերն ալ որչափ սև են... քէօմիւր-
ճիի խանութէն ելած է կարծես:

— Ակուսներն շատ սպիտակ են... հիմա
մախպուլ չէ ճերմակ ակուսները:

Դիմացի կողմը:

— Քա վախս ի՞նչ էր... աս նետուողը
ո՞վ է:

— * * * աղային կնիկն է:

— Աղ կտրիճին կի՞նն է:

— Այո՛:

— Քա ասոր ինչի՞ն հաւանեցաւ տէ առաւ:

— Հինգ հազար ոսկի գրախօմա տուաւ
աղջիկը:

— Վահ, վահ, վահ... սատանայ կը նը-
մանի նէ:

— Մէյ մ'ալ էրկանը հարցուր:

— Սա թրախոմայով կին առնողներն ի-
րաւ որ խենդ են... քա այս ոսկորը կը
կրծուի:

Հագուեցէ՛ք տիկիներն և դուրս ելէ՛ք:

Դուրսը կապասեմ ձեզի:

Տիկիներն կսկսին հագուել և մէկիկ մէ-
կիկ դուրս ելնել:

Մտիկ ընենք այժմ ասոնց խօսակցութիւնը
ճամբան:

— Ուսկի՞ց կուգաք տիկին:

— Բաղնիքէն:

— Զտեսայ ձեզի հոն:

— Դուք հո՞ն էիք որ:

— Հոն էի հապա:

— Ես ալ ձեզի չտեսայ:

— Զարմանալի բան:

— Իրաւ զարմանալի:

Ուրիշ երկու տիկիներ:

— Հոս պիտի տեսնուինք եղեր:

— Խըսմէթը ասանկ է եղեր. բազմիքին
մէջ պէլքի ձեզի կը տեսնամ ըսի ամա, չը
տեսայ:

— Դուք բաղնիքն էիք:

— Այո՛:

— Ես ալ բաղնիքն էի:

— Ի՞նչոր կըլլայ որ զիրար չտեսանք:

— Դուք քանի՞ թիւ օթեակն էիք:

— 8 թիւ:

— Քովի օթեակն ալ ես էի:

— Դո՞ւք էիք:

— Զհագուած խօսեցանք նէ իրարու հետ:

— Խօսեցանք ես:

— Ոտքդ պազնեմ աս ինչոր կըլլայ քի...:

— Աս խնդալու բան է...

— Պարոնեան չիմանայ:

Պարոնեան գիտէ արդէն թէ կանայք ո-
մանք ո՛րքան փոփոխութիւն կը կրեն երբ
փողոց ելնեն:

Տակաւին շատ բաներ կան գրուելիք ա-
րանց և կանանց բաղնիքներու վրայ: Այսօր
կը վերջացնենք մեր սոյն յօդուածն յանձ-
նարարելով մեր ընթերցողաց և ընթերցողի-
դուղդեաց կամ ընթերցողանուշեաց որ ծո-
վու մէջ խելօք նստին, զիրար չբամբասեն,
զիրար չծաղրեն, լողալ չգիտցողներուն վը-
բայ չխնդան:

Մոյն շատ վեր է ձեր երեւակայած կա-
պոյտ դաշտէն, գեղեցիկ է նա, շնորհալի է,
փափուկ է, վսեմ է, մերկացէք ամենայն
ինչ երբ ծովու հետ գործ ունիք: Անկեղծու-
թեամբ մըտէք հո՛ն, օրօրուեցէք անոր փա-
փուկ կուրծքին վրայ: Իսկ երբ բարկանայ
կրակ կը կտրի — ջուրը կարծեմ կրակ չկըտ-
րի, բայց մեաս չունի հոս — և իւր լեւնա-
նման կոհակներով կը պատժէ զձեզ: Զգոյշ
կացէ՛ք:

Հանուինք ուրեմն և վայելենք ծովուն
բարիքները երբ հանդարտ է նա, երբ յօտակ
է, պայծառ է, ջինջ է, մաքուր է:

Գոնէ սիրտերու կարօտը ծովէն առնենք
... շատոնց է որ մաքուր սիրտ տեսած չու-
նիմ:

Յ. Յ. ՊԱՐՈՆՆԵԱՆ

ԵՐԲԵՄՆ ԵՒ ՀԻՄԱ

Մենք այն ատեններուն չի հասածք,
մե՛ղք...:

Շատ ատեն չէ. ասկէ քսան երեսուն
տարի առաջ, աղջիկներ իրենց սիրային Ե-
panchementներու միջոցին, երիտասարդին
վզին կը պլուրին և՛

— Սոխ հաց ուտեմ, քեզի հետ ապրիմ,
կ'ըսեն եղեր:

Ի՛նչ երանելի և օրհնեալ ժամանակներ
էին ատոնք ամուսնական կեանքի համար:

Իբաւ է թէ, ասկէ քսան—երեսուն տարի
առաջ աշխարհք այն յառաջդիմութեան մէջ
չէր ուր կը գտնուի այս օր: Այն ատենները
չոգեկառքը հազիւ քսան քիլոմէթր տեղ կը
կտրէր ժամը և Գատը-գիւղի 4 թիւը տա-
կաւին rhumatismesներ չունէր. ոչ ֆօնօկրաֆ
կար և ոչ ալ purnographe յօդուածագիր-

ներ — զոնէ մեր մէջ —. Զիֆթէ-Սարաֆը
տակաւին ծիծ կուտէր և սա Բրիզանթէմը,
կիները ճանչնալու համար, շարունակ վեր
կ'առնէր ... suis-jeին փէշերը:

Բայց ի՛նչ փոյթ, մարդս գոնէ կրնար սի-
րել իրաւցնէ անձնուէր աղջիկ մը, սէրերը
փոխադարձ կ'ըլլային և ասիկայ՝ pour le
bon motif, առանց թաքուն նպատակներու,
խարդախանքի: L'amour pour l'amour.

— Սոխ հաց ուտեմ, քեզի հետ ապրիմ...
Քիչ մը գռեհիկ, վար ոց, ճենճ հոտող
բացատրութիւն մըն է այս՝ եթէ կ'ուզէք,
բայց այդ վեց բառերուն մէջ բանաստեղծու-
թիւն մը կայ համակ: Հոգիին աղաղակն էր
այդ:

— Սոխ հաց ուտեմ, քեզի հետ ապրիմ...
Սոխ ուտող աղջիկ մը թէեւ շատ բան
չըսեր ինծի, բայց այդ անճաշակ բացատրու-
թեան մէջ կը ճանչնաս բոլորանուէր աղջիկը՝
ամէն անձնուիրութիւններու, ամէն զոհողու-
թիւններու պատրաստ:

Այն ժամանակները սէրը մարմնական
պէտք մըն էր, տեսակ մը զգացում անօ-
թութեան և ծարաւին պէս: Ասոր համար
թերեւս Ալֆրէտ տը Միւսէ կը հարցնէր
նինօնին:

Comment fait-tu pour vivre,
Toi qui n'a pas d'amour?

Բարքեր, ժամանակները ա՛յնքան կը
փոխուին եղեր:

Այսօր, աղջիկներուն հարիւրին ինըսու-
նին համար սէրը պարզապէս միջոց մըն է
աղէկ կարենալ հագուելու:

Արդուզարդի դարն է այս:

Եւ ըսել է բուն ճշմարիտ սիրոյ մէջ ա-
ւելի հանուելու խնդիր կայ քան թէ հագ-
ուելու:

Երբեմն, երբ աղջկան մը սոխ-հացը կ'ա-
պահովէր, խենթ կը կտրէր քեզի համար:
Հիմա՝ փոխանակ սոխի՝ Suprême Pernot
խոտացիր, նորէն գբաւ կը զնեմ որ չոր
պաշիկ մը անգամ չես կրնար փրցնել:

Երբեմնի աղջիկները ամուսնութիւնը կ'ըմ-
բռնէին իբրեւ միջոց մը տարփալից հոգիի
մը սփոփանքները գտնելու, միջոց մը զա-
ւակներ ունենալու, միջոց մը տանտիրուհի
ըլլալու:

Հիմա ամուսնութիւնը, իրենց համար, մինակ ճամբան է ճոխ արդուզարդեր հայթայթելու: Ուրիշ ոչինչ:

— Կարգուիմ նէ սա փետուրը պիտի առնեմ, կարգուիմ նէ Սատամ Շմիտին քով պիտի հագուիմ, կարգուիմ նէ Քսէնոփոնոյէն դուրս չպիտի ելլամ, կարգուիմ նէ մետաքսէ ճերմակեղէններ միայն պիտի հագուիմ, կարգուիմ նէ կրցածիս չափ մատնիներ պիտի անցընեմ մատներուս, կարգուիմ նէ ամէն գոյնէ blouseներ պիտի չինել տամ, կարգուիմ նէ պարահանդէսի համար սքանչելի չըջազգեստ մը պիտի բերել տամ Բարիզէն, կարգուիմ նէ սօլիթեր օղեր պիտի կախեմ անպատճառ, կարգուիմ նէ ձեռնոցներս երկու անգամէ աւելի չպիտի դնեմ, կարգուիմ նէ բնաւ ոտքով դուրս չպիտի ելլամ, կարգուիմ նէ ա՛լ զեփիւր ո՛վ վրան կ'անցընէ, կարգուիմ նէ այսպէս, կարգուիմ նէ այնպէս:

Ահա ի՛նչ կը մտածեն, ի՛նչ կ'ըսեն, ի՛նչ կ'երազեն, ի՛նչ իտէալով կ'ապրին և ի՛նչ փափաքներով... տունը կը մնան աղջիկները այս օրուան:

Ամուսնութիւն և արդուզարդ բառերը երկուորեակ են իրենց համար:

Ատենօք, երբ տղայ մը ամուսնանալու կ'ելլէր, առաջ առաջ կը մտածէր թէ կինը ի՛նչպէս պիտի կերակրէ, հիմա՝ ի՛նչպէս պիտի հագուեցնէ. մինակ խնդերն են որ կը մտածեն թէ ի՛նչպէս պիտի հանուեցնեն:

Եւ պատահեցաւ ինչ որ քնակահանաբար պիտի պատահէր: Հրապարակին վրայ ամուսնութիւնները այնքան հազուագիւտ եղան այսօր որքան խուլութեամբ թալէռները:

Առաջ մանչերուն հայրերը՝

— Տղաս կարգեմ որ մարդ ըլլայ, կ'ըսէին. Հիմակուան մայրերը՝

«Առաջ մարդ ըրէ տէ՛, ետքէն աղջիկ քինտուելու ելի՛ր» մը կը նետեն երեսին:

Յաւալի, բայց այս այսպէս է: Եւ իրաց այս վիճակն է որ ստեղծեց մեր մէջ le ménage à trois, այսինքն կինը, ամուսինը և միւսը, commenditaire:

Արդի պայմաններուն մէջ, ամէնէն կորովի երիտասարդը՝ կին մը գոհացնելու անկաւորող է արդուզարդի տեսակէտով: Եւ ապա-

հովապէս, ատանկ ծանր բեռի մը տակէն չպիտի կրնար ելլել՝ եթէ Աստուած... բարեկամներ տուած չըլլար իրեն:

Ընտանեկան յարկերու անդորրութիւնը, ամուսնական երջանկութիւնը, կիներու հաւատարմութիւնը այնքան քիչցան՝ որքան աւելցան արդուզարդերը:

«Արդուզարդեր տուէ՛ք մեզի և մեր ունեցածը ձեզի» — ահա՛ նշանաբանը այսօրուան կիներուն:

Նորաձեւութիւնը՝ սպաննեց ընտանեկան բարոյականը:

Սոխ-հացի աչք ունեցող կիները իրենց էրիկները չէին կործանել անտեղի ծախքերով:

Երկու ձեռք հագուստ կ'ունենային անոնք, ամառուանը և ձմեռուանը:

Եկէ՛ք միասին աչքէ անցընենք թէ ի՛նչ կը հագնէին ասկէ երեսուն տարի առաջուան կիները:

Ոտքերը լաստիկով պարզ կօշիկ, ճերմակ գուլպայ — չատ անգամ տունէն դուրս — չըջազգեստ մը առանց որ եւ է ֆարպալայի, թեթեւ աժան գլխարկ մը և ձեռքերնին ճերմակ թաշկինակ մը: Եւ այս տարազով ամէն տեղ կ'երթային:

Իսկ հիմակուանները:

Այս անգամ գլխէն սկսինք:

Գլխարկը ինքնին ցուցահանդէս մըն է թուումներու, փետուրներու, ծաղիկներու, քեթ-լիսի, պլուդներու, ժապաւէնի, տանթէլներու, յարդի, մետաքսի, թաւիչի: Ասոնց վրայ աւելցուր երկայն գնդասեղ մը, վուալէթը և ինչ որ կը մոռնամ այս պահուս:

Վզին և լանջքին վրայ նորէն տանթէլներ, ժապաւէններ, թաւիչի կտորներ եւն... Եւ թեւեր ունին հիմա որոնցմէ չորս հատ տղու գոգնոցի կերպասը կրնաս հանել, մէջքը գօտի, չըջազգեստին ետեւի կողմը գնդասեղներ որոնք մէյ մէկ գոհարներ են ստէպ:

Ձանց կ'ընեմ նկարագրել ամբողջութիւնը չըջազգեստին զոր մանրամասնելու համար դերձակուհի մը կարողութիւնը կը պակսի քովս:

Ինչպէս ըսի, առաջուան կիները մինակ թաշկինակ մը ունէին իրեւ *accessoire*:

Հիմակուանները, տեսէք ինչեր ունին:

Նախ ձևաբեր ունենալու է զոյգ մը ձևա-
նոց և ապա ridicule մը որուն մէջ պիտի
գտնես այցեքարտի տուփը և դրամապանակը,
մէկ կամ երկու թաշկինակ, ուրիշ պզտիկ
սիրուն տուփ մը որուն մէջ բուսրան և հուփը,
տրցակ մը բանալի, հոտի պզտիկ սրուակի՞մը,
ասեղ, դերձան և գնդասեղ:

Թաթիկներուն մէջ բռնած պիտի ունենայ
նաեւ հովահարը, հովանոցը և face-à-mainը:

Հապա բէլըրինը, պօան:

Ասիկայ էսնաֆ կնկան թուալէթն է, բայց
երբ տունին մէջ commenditaireներ կան որ
տիկնոջ տրամադրութեան տակ կրցած են
դնել տան կառք մը, օհ, այն ատեն, c'est
tout un arsenal.

Այդ կառքին մէջ՝ դիմացի կողմը ժամա-
ցոյց մը և ասոր տակ դարակ մը որ կը պա-
րունակէ նախ պզտիկ դեղարան մը, անքի-
բիրին, աֆօնիքին, վերաքին և նոյն իսկ
սքրինգին:

Սրուակներ o sp մէկիսի, o sp ֆօլօնի,
դիւսու ցաւի յատուկ մատիտ մը, անգլիական
աղբրու սիրուն, բիւրեղեայ սրուակ մը:

Հարբուխի դէմ կօմեր, բաւքիյներ հազի
դէմ քիչ մը շօքօլա և քանի մը հատ պիսիլի,
տիկինը կրնայ մարելիքներ ունենալ ճամբան:

Դարձեալ կառքին մէջ կը գտնես Բրէն-
թանին prix-courantը և Պուրժէի վերջին
հատորը: Գրելու համար գրիչ, մեկան, թուղթ,
պահարան, մատիտ և կտոր մը ծծուկ... ի
դէպս գործածելի: Տիկինը հետը առած է
նաեւ քանի մը սիկառէթ, լուցկի և ոսկի
ուների մը:

Ահա կիններ ինչ կը պահանջեն որ իրենց
ամուսինները կարենան հայթայթել այսօր-
ուան օրս:

Սոխ-հացէն որքան հեռու ենք, հէ՛:

Առաջ սոխ-հաց կը կերցնէիր, բայց կինը
քուկդ կ'ըլլար. հիմայ բնհեղներու մէջ կը
պահես. պուպրիկի մը նման կը հագուեցնես
և հարիւրին ինքնուրու ուրիշներունը կ'ըլլայ:

Իր էրկընէն աւելի, ուրիշներուն հաճելի
ըլլալու համար է որ այսօր կինը կը հագուի:

Միւս կողմէ սակայն, կենսապայքարը
կը լիճուարանայ, չափերը կը նուազին և
գործերը կը թուլան:

Բայց Տիկինը այդ բաներէն տեղեակ չէ:

Հայթայթիչները իրենց հաշիւներով կ'ողողեն
տունը և ամուսինը գլուխը կը կորսնցնէ:

Ահա այդ տագնապին մէջն է որ տիկնոջ
բարեկամները օգնութիւն կը հասնին, և
անխոստովանելի համաձայնութեամբ մը կը
կազմեն ամուսնական triou և երբեմն qua-
torը, առանց որոյ կարելի չէր այդ տան մէջ
վերահաստատել երբեմնի երջանկութիւնը:

Հիմայ ամէն ինչ կարգին է և այդ ըն-
տանիքին մէջ կը տիրէ ջինջ և պայծառ երա-
նութիւն մը, երանութիւն մը... կաթնաթոյր:

Բարոյական. — Պատուաւոր կիները սոխ-
հաց ուտողներն են:

Թ. Ա. Գ. Ս. Բ.

ԱՌՁԻՆԵԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Պարկէշտ ու պարտաճանաչ գործունէու-
թեանը շնորհիւ Գըլըճեան գրատունը, ահա
այսօր իր անդրանիկ հրատարակութիւնը կու-
տայ մեր զաւակներուն:

ԳԱՆՁԱՐԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՆ
ԿՈՒԹԵԱՆ, ահա՛ դիրքին անունը որ աշ-
խատութիւնն է ծանօթ և սիրուած հրապա-
րակազիր Արամ Անտոնեանի, որ ջանացած է
այս գողտրիկ հատորին մէջ խտացնել այն
ամէնքը՝ որոնք մանկան մը նկարագիրը կ'ող-
ղեն, կ'ազնուացնեն:

Գեղարուեստական կողքը, տպագրու-
թեան ազնուութիւնը և տոկուն կազմը որ
տպարանապետ Մատթէոսեանինն է, և պա-
րունակած բաղմամբիւ յատակ պատկերները
ալ աւելի հմայքը կաւելցնեն գրքին, անանկ
որ՝ է՛ն յետագէտ ուսանողին իսկ պիտի կրը-
նայ խրախոյս տալ:

Կը շնորհաւորենք Գըլըճեան էֆէնտին իր
այս անդրանիկ՝ բայց յաջող սկզբնաւորու-
թեանը համար և յարատեւութիւն կը մաղ-
թենք:

Գիտն է 5 ղրուշ:

Հասցէ՝ Չաղմագճըլար եօգուշու, Թ. 25.



CAUCHEMAR!!!

Կէս գիշեր է:

Ննջասենեակս առանձնացած թօն մը կուգեմ տալ այն անհամար մեղքներու բազմութիւն, որոնք աչք գոցել չեն տար՝ Օգոստոսի սա՛հեղձուցիչ ամիսին: Nigt ligtը հո՛ն, լաւապօրիս վրայ կը պլպլայ ու ես մահճակալիս մէջ ընկողմանած դեռ կ'ունկնդրեմ այդ սատկեցնող և ջիզեր թունդ հանող օրֆեսքոն, անիծելով չար բազդս որ դէմս ընկերունի մը չէ հանած, գոնէ անոր հետ երկու գոյգ խօսք փոխանակելու համար: Ու դարձեալ ինքզինքիս կը դիմեմ, անձիս հետ կը տեսակցիմ և կը հարցնեմ ես ինձի. ինչո՞ւ մեր աղջիկները ծանր ծանր կ'ամուսնանան:

Ու այս հարցը ժամերով կը յոգնեցնէ զիս ու կը թուշնամ, քունը կը տանի զիս այլ աշխարհ, ուր ալ չեմ լսեր ոչ մեղքներու ֆանֆաուր, ոչ ալ աղջիկ բառ:

Խորհրդածութեանս մէջ, կէս քուն կէս արթուն կ'երեւակայեմ. օրիորդ մը, աղուոր բառին կատարեալ իմաստովը, չիք, քսան և հինգէն ութը տարուբեր, միօգօրիներու պուֆէ մը կուրծքին ձախ կողմը, մարմրուն աչքերով դէմս կայնած փիսիկի մը պէս կը մլաւէ ու միշտ պատրաստ հարցումներուս պատասխանելու:

Նախ par complaisance, յանկարծ անկողնէս ցատկել կուգեմ՝ պատուասիրելու համար անծանօթունիս, բայց հազիւ թէ ճարճրկած թէ չէ, չափազանց ցեկիծեմ վիճակս կ'ստիպէ զիս վերմակիս տակ սողոսկելու ու դուրս դուրս կը տեսնուիմ հետը:

— Զեր անունը օրիորդ...

— Արտէմ., կը պատասխանէ Յալովացի սպանուհիի մը պէս, օրուն առաջին անգամ տան տիրուհին կը հարցնէ անունը՝ ինչպէս սովոր են ընել:

— Քանի՞ տարեկան էք...

— Թէեւ կազմս անլի ցոյց կուտայ, սակայն քսանհինգը չեմ լրացուցած:

— Վարժարան յաճախա՞ծ էք, և ո՞ր վարժարանը...

— Շրջանաւարտ եմ այն վարժարանէն որ...

— Հասկցայ, ըսել է Անգլիերէն գիտէք, ուրիշ...

— Յրանսերէն, կարգ մը գիտութիւններ և քիչ բան մ'ալ հայերէն...

— Կը ներէք անշուշտ օրիորդ երբ հարցնեմ ձեզ թէ ամուսնանալու փափաք ունի՞ք, կ'ուզէ՞ք ամուսնանալ...

— Ամուսնութիւն... ախ իտէալս ըսել կուզէք, բայց որո՞ւ հետ...

— Ա՛... ըսել է ձեզ գաղափարակից մէկուն չէք հանդիպած՝ ձեր ամբողջ կեանքին մէջ... այո՞...:

— Օրուան երիտասարդները բոլորն ալ եթէ ոչ ձեռքիս տակ, գէթ աչքիս ու մտքիս առջեւն են... մօտէն զիտեմ անոնց վիճակը, ուսումնասիրած եմ զիրենք ու միշտ հագին անջրպետ մը դտած եմ, իմ իտէալ ամուսնոյս և իրենցմէ է՛ն աչքառուին միջև:

— Լաւ Օրիորդ, մտերմաբար հարցում մ'ալ եթէ կը հաճիք. ի՞նչ է ձեր իտէալը, ի՞նչպիսի երիտասարդ մը կուզէք որ ձեր ձեռքը խնդրէ:

— Իտէալ երիտասարդս պէտք է որ պաշտելի գիտնայ, ըմբռնէ սա միակ և բացարձակ ճշմարտութիւնը թէ, կին մը վարդին կը նմանի, անոր փուշերը իր քարոխներն են, վարդը հոտոտելու, վայելելու է՝ առանց փուշերուն խայթին ենթարկուելու, այսինքն զգուշանալու է մեր փաթիլներէն և անոնց-

մէ մասամբ վախճալու է՝ չխայթուելու համար:

— Բայց կարծեմ թէ ձեր այդ փափաքը շատ վերացական է օրիորդ և դժուար գանիկայ իրագործելը: Կ'ընդունիմ թէ դուք և ձեր նման օրիորդներ վարդերու պէս ըլլաք, բայց գիտէք որ շատեր երբ վարդը փրցնեն ու ձեռք տունել ուզեն, իրենց առաջին գործը կը լայ քսել հանդիմանոր այ պղտիկ փուշերը որոնք ցաւ կ'սպառնան... համմէ...:

— Ահա թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար... գիտեմ ձեր այդ ըսածը և կ'ընդունիմ. օրուան երիտասարդները ինքզինքն չեն տանելու մեր էն թեթեւ փափաքը, անոնք կ'ենը սպասուհի կ'ըմբռնեն, և խնդրած օժիտին ալ դժբաժնակալ, բայց ես և ինձ պէս մտածող աղջիկներ աւելի լաւ կը սեպենք ամուսնի, միտակցաց մնալ, քան թէ մեր նիւթականը, ֆիզիքականը գերի ընել հովկուր բախտախնդիրի մը...:

— Ուրիշ հարցում մը Օրիորդ, դուք ալ փոխադարձաբար կուզէ՞ք տեսնել ձեր իսկալ ամուսնոյն քաբրիաները, օրինակի համար...:

— Երբէ՞ք, ինչպէս ըսի այն երիտասարդը, որ իմ ամուսինս ըլլալու բաղդը պիտի ունենայ, պէտք է գլխովին նուիրուի ինձի, որովհետեւ... ես ասանկ կուզեմ...:

— Բայց կը յուսաք թէ ձեր այդ գաղափարին ծառայելիք յարմար մէկը գտնուի թէ հոս և թէ հանդերձելոյն (°) մէջ...:

— Յոյս, միշտ յոյս, թերեւս բարի մայր մը ծնած ըլլայ տիպար մը, կ'սպասեմ կ'ըսպասեմ մինչեւ որ բաղդը հաշտուի հետս ու զէմս հանէ զայն...:

— Ուրեմն Օրիորդ, շատ մօտ կը գտնուիք այն երիտասարդին որ պատրաստ է խնդրել ձեր ձեռքը՝ ընդունելով ձեր բոլոր առաջարկները...:

— Ո՞վ... դժուար... հա՛, հա՛, հա՛, դո՛ւք որ անդրաւարտիք կը հագնիք, գլուխնդ սկուծա կը դնէք, և գուլպաներով կը պառկիք այսպէս, ա՛... երբէ՞ք, երբէ՞ք...:

— Բայց Օրիորդ խնայեցէք, մենք ասանկ վարժուած ենք, վերջէն կը մօխնք, հիւանդութեան մը տէր կ'ըլլանք, ո՞ւր կը մնայ մեր երջանկութիւնը...:

— Տես մենք և մեզի պէս մտածողներս ի՞նչ կը կրենք ըսելով կը բանայ բարակ պուշիկն կոճակները ու տակէն ցոյց կուտայ ինձ սաքեմ մարմինը՝ rose քօսսաթին մէջ պարփակուած...:

— Հի՛...ի՛...ի՛...:

Ու երբ այլալմէ եղած ցատկի նետուիլ կուզեմ այդ հրեշտակին վրայ՝ մոռնալով իր բազմապահանջ չըլլալիքները, յանկարծ կըսթափիմ...:

— Վո՛ւյ... վախս ի՞նչ էր, երազ տեսար ծօ՛, կը ձայնէ խեղճ մայրս, որ իմ հանգիստիս համար իր քունը ծախած՝ ճրագ է ձեռքն քախսապիթի կը ժողուէր մահճակալիս մօտ...:

* * *

Cauchemar! Բայց ի՞նչ իրական cauchemar՝ ու երազային տեսիլքով մը մօտէն, շատ մօտէն կը տեղեկանայ այն անտանելի փափաքներուն որոնք օրուան զարդացած աղջիկներուն վարդագոյն ֆօռսքներուն տակ կը պահուին եղեր...:

ՔՕՊՈՍ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Յառաջիկայ Կիրակի, 19 ամսոյս, Օգոստիս Կայսեր Գահակալութեան տարեդարձըն լինելով, նոյն օրն, մասնաւոր հանդիսաւորութեամբ եւ Ամեն Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ բարեմաղրութիւնք տեղի պիտի ունենան Մայր Եկեղեցւոյ մէջ, վասն արեււոտութեան եւ բանկազին Կենաց Նորին Կայսերական Վեհափառութեան:

Հետեւաբար ներկայ յայտարարութեամբ յաջկապեա կ'հրաւիրուին մայրաքաղաք գրեւոր Սրբազան Եպիսկոպոսունք եւ Վարդապետք, եւ Ս. Եկեղեցեաց Բարոցիք եւ Աւագերիցունք եւ Քահանայք, ասիեանաւոր ազգայինք եւ ընդհանուր Վարչական Ժողովոց ու Տեսուչ Խորհրդոց, Թաղ. Խորհրդոց եւ հնամականութեանց ու Հոգաբարձութեանց անդամք՝ նոյն օրն, ժամը ճիշդ 3 ին ներկայ գտնուիլ ի Պատրիարքարանս:

ԵՆԻՔ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

“ ՄԵՆՔ . . . ”

Մենք զարգացած ենք կըսեն օրիորդները նազելի, որոնք տարի մը Հօմ Գօլէթ գացած են ու վեց ամիս ալ Սէօուերուն:

Մենք բարձր ուսում առած ենք կըսեն պարոններ, որոնք թաղային վարժարանէ մը հազիւ չըջանաւարտ են ու Պէրպէրեանին տնունը միայն լսած:

Մենք մեծ միտքեր ենք կ'ըսեն այս օրիորդները ու պարոնները և իրենց հօրը չեն հաւնիր, մայրերնին ալ պարզապէս իրենց գործիքը կընեն:

Եթէ նկատելու ալ ըլլանք թէ այս կարգի օրիորդներէն մէկը, քիչ շատ ալ գեղեցիկ ըլլայ, այն ատեն գործ ունին բոլոր երիտասարդները՝ մօտէն կամ հեռուէն:

Զարգացած եմ կ'ըսէ օրիորդը ու ամէն բան իրեն համար ներելի կը նկատէ:

Եթէ իրեն հետ տեսնուելու ըլլաս, առջին անգամ սիրոյ վրայ բարձր գաղափարներ կը յայտնէ, ու վերջը կը հասկնաս թէ ամբողջ կեղծիք է եղեր. որովհետեւ ինք սիրտ չունի այլ քարի կոոր մը:

Եթէ թատրոնի վրայ դառնայ խօսակցութիւնը, այն ատեն պիտի ճառէ մեծամտութեամբ մը՝ որ Սկիւտարցիի առանձնայատուկ է, թէ ինք կը նախընտրէ օբէրան, ու կը սիրէ տրամաթիքը, բայց չմոռնանք աւելցնելու թէ Ծրանասական տրամաթիկ խումբը կը սիրէ... ու շաբաթ գիշեր Մնակեանի ներկայացումին կը տեսնաս զինքը որ... խըրթ... տանձ ուտելու զբաղած է ու վերջը՝ արամին շատ յուզիչ ըլլալը կը խոստովանի:

Զարգացած պարոնը հոն Մնակի թատրոնն է, որուն քնաւ չհաւնիր, ու եկած է մէյ մը զարգացած օրիորդները գիտելու (որովհետեւ ժամադրութիւն ունի) ու երկրորդ որովհետեւ նոյն խաղը անգամ մը Ֆրանսական խումբին կողմէ ներկայացուած ատեն տեսած է ու բան մը հասկցած չէ. հիմա խաղին նիւթը հասկնալու համար եկած է, և եթէ հարցնելու ըլլաւ թէ գոհ մնաց, կը պատասխանէ. «Է՛հ, գէշ չէր, մենք աղէկը տեսած ենք»:

Նազելի օրիորդը կ'ըսէ. «Մենք բանաստեղծութեան վրայ մեծ ուսումնասիրութիւններ ըրած ենք», ու կաւելցնէ թէ Ռուբէն Զիլինկիրեանի՝ նորապսակ բանաստեղծին իր շնորհաւորութիւնները զրկած է:

Պարոնը, «Մենք բանաստեղծ ենք» կ'ըսէ ու եթէ կարելի չըլլայ այդպէս ըսել, «Բանաստեղծի խմոր ունինք» պիտի ըսէ անպատճառ: «Ամիսը 8ը 10ը ոսկին կարեւորութիւն չենք տար մենք» կ'ըսէ, ու եթէ գիտնաս որ 250 զրուշի փոխարէն է իր ամբողջ ամսուան աշխատութիւնը, այն ատեն «մենք դրամի կարեւորութիւն չենք տար» կ'ըսէ:

Զարգացած օրիորդը «մենք մարդու կարեւորութիւն չենք տար» կ'ըսէ ու կը հագուի այնպէս... որ ամենքը իրեն կը նային ու ինք կը կարծէ որ ամենքը իրեն կարեւորութիւն կուտան:

Եթէ ոտքերը ու ձեռքերը խոշոր ըլլան անգլիական սիսթէմ կը հագուի:

Ուսումնաստեղ պարոնը չափազանց շատ կը կարդայ... ու անոր համար միշտ գրպանը գիրք մը ունի. և մինչեւ կէս գիշեր զբօսաւայրն է, ուր մօլթին մէջ կը կարդայ՝ զարգացած օրիորդին քնական գիրքը:

Համայնագէտ օրիորդը սապէս կը խօսի «մենք ամեն բանի վրայ գաղափար ունինք» անգլիերէն գաղղիերէն... գիտէ որ այդ տեսակ լեզուներ կը խօսուին, ու նոյն լեզուներէն մէյ մէկ երգ գոց ըրած է: Միւզիլքէ կը հասկնայ ու Ալէմ Տաղի՝ տավուլ գուռնան... լաթէռնայէն կը նախընտրէ:

Զարգացած պարոնը... շատ չխօսիր, երբեմն մատները մաղերուն մէջ կը խօթէ մէկէն ի մէկ, երկայն գրուածքներ չկարդար ու կարճ բանաստեղծութիւնները կը նախընտրէ, այն ալ բացօդեայ Ֆրէնկին լերան կուրծքին վրայ կը կարդայ՝ Մեծարեացը, Զիլինկիրեանը ու Նազարեանը:

Զարգացած օրիորդը սիրային առաջարկներ շատ կ'ստանայ և որովհետեւ ինք զարգացած է ու կրթեալ, կը պատասխանէ սա՛ պէս. «մենք քարէ սիրտ ունինք» ու կը մերժէ. բայց այնքան քաղաքավար է որ, եթէ այդ մերժումը տղան կրկին տեսնալու ըլլայ, չամչնար այնպէս մը նայելու անոր որ

տղան բնաւ. Հաւատար թէ այսքան նազելի
օրիորդ մը այդօրինակ բան մը կրնայ ընել:

Զարգացած պարոնին իտէպն է՝ ամուս-
նանալ զարգացած օրիորդի մը չհետ: Կը նա-
խընտրէ սիրահարիլ ու յետոյ ամուսնանալ և
այդպէս կընէ. ամուսնութենէն ետքը զար-
գացած օրիորդը՝ զարգացած տիկին, ազատ
է իր ուզածը ընելու ու չաքաթը երեք ան-
գամ վար կ'իջնէ գնումներ ընելու...:

Կ.Ռ.ՕՇ



ԹԱՏԵՐԱԿԱՆ

Մնակեան թատերական խումբը, գոհա-
ցում տալու համար Սկիւտարի թատերասէր
հասարակութեան, այս շաբաթ գիշեր խիստ
մեծ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ
ՍԱՌԱ ԿՈՄՍՈՒՀԻՆ անուն տրամբ:

Թատրոնը այս առթիւ չքեղապէս զար-
դարուած ըլլալով՝ ժողովուրդին հանգիստին
համար ոչինչ խնայած է պէտք է ըսել:

Ուստի կը յուսանք թէ Սկիւտարցիք պի-
տի փութեան խրախուսել իրենց, որ ամէն
շանք ի գործ կը դնէ գոհացում տալու հա-
մար իրենց ճաշակին:

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ

Սկիւտար Պաղար-պաշի

ՕՍՄ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԻՆ ԿՈՂՄԱՆԷ

ԱՌԱՋԱՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ Պ. Մ. ՄՆԱԿԵԱՆԻ

1907 Օգոստոս 18, ՇԱԲԱԹ գիշեր ժամ 2 1/2 ին

ՍԱՌԱ ԿՈՄՍՈՒՀԻՆ

Տրամ 5 արար

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ



ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թուականէս ամիս մը առաջ, լրագրա-
կան յայտարարութիւններով ծանուցած էինք
թէ՝ թողած ըլլալով մեր նախածեղծութեամբ
հրատարակուած կանանց յատուկ Ծաղիկին
վարչութիւնն ու խմբագրութիւնը, համա-
ձայնած ենք Լոյս կրօնաթերթի Տնօրէնու-
թեան հետ, կանանց հանդէսի վերածելու
համար Լոյսը, իբր շարունակութիւնը մեր
լրագրական ձեռնարկին: Եւ այս առթիւ,
բաժանորդական հաշիւէ դաւաններէն մեզի
պարաք ունեցողներուն հրաւեր ուղղած էինք
Լոյսի միջոցաւ, դրամները ուղղակի գրկել
Մանգումէի արտօնատէրին և Լոյսի տնօրէն
Յովհաննէս Էֆ. Գայսէրեանի, մեր և ո'ր
միջեւ եղած կարգադրութեան մը համաձայն:
Այսպէս, ամիսի մը չափ շարունակելէ ետք
Լոյսի խմբագրութիւնը իբր կանանց թերթ,
այսօր հարկադրուած կ'զգանք յայտարարել
ընթերցող հասարակութեան քե վերոյիշեալ
կարգադրութիւնը ջնջուած է բանաւոր պաշ-
տակներով, քե Լոյսի վերջին 32 հոգ քիւր մեր
խմբագրութեան ցակ հրատարակուած չէր ա-
դէն եւ քե ո' եւ է առնչութիւն չունիմք այլ
եւս Լոյսի հետ որ տարակոյս չկալ քե մեր
նախածեղծութեամբ հրատարակուած կանանց
յատուկ Ծաղիկին շարունակութիւնը չի եր-
կանուիր:

Հետեւաբար, կը խնդրենք որ գաւառնե-
րէն՝ կանանց յատուկ Ծաղիկի ատենէն մեզի
հետ հաշիւ ունեցողները, իրենց այդ առկա
հաշիւները կարգադրեն ուղղակի մեզի հետ,
իրենց նամակները և բաժնեգինները գրկել-
ով մեր նախկին հասցէին, Ղալաթիա, Գուր-
շունլու խան, թիւ 7 Ծաղիկի խմբագրա-
տունը:

Մեր բաժանորդներուն հանդէպ մեր յանձ-
նառութիւնը լրացնելու համար թէեւ երեւ
թիւեր կը պարտէինք սակաւին, բայց նը-
կատելով որ տարւոյն ընթացքին մէջ մէկէ
աւելի անգամներ բաղադրիկ և ճոխ թիւերով
այս պահանջին կրկինը տուած ենք արդէն,
մեր յանձնառութիւնը լիովին կատարած կ'ըլ-
լանք և կը յուսանք որ մեզի հետ առկա
հաշիւ ունեցող բաժանորդները իրենց պարա-
քերը կը հատուցանեն, գործնական ապացոյ-
ցը տալով այսպէս իրենց համակրութեան
և պարտաճանաչութեան որո մասին եր-
բեք տարակոյս ունեցած չենք:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՈՒ

ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅՈՎ...

[ՍԵՅՐԵԽԱՊԱՏԻՒ ՅՕԴՈՒԱԾ]

Նիւթիս հերոսը կարելի է կը ճանչնաք, չառ անգամ հանդիպած կամ տեսած ըլլալու էք սա միւսի կուռնիկը որ ամէն ատեն gros lotն վաստկածի խելացնոր վիճակ մը ունի, en relief épatante ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիք: Իր արտաքինը որ աղջկանը 1000 ոսկի զոհող մայրերու իսկ չողիք կը վաղցնէ. ներքնապէս անվարտի մը սակայն, կատարեալ հովկուղ մը որ, ես դուն ան կ'ապրեցնենք, ինծի քեզի անոնց կը յաճախէ, ու հոս հոն անդին կը կշտանայ ինչպէս նաև հոսայ, հունայ տըսեղ կը գիշերէ:

Ձի ճանչցաք, գիտեմ, արդէն անանկ կ'ըլլայ, է'ն ծանօթ դէմքերը երբեմն է'ն հեռաւոր աղգականներուն պէս շուտ կը մոռցուին և դիւրաւ միտք չեն բերուիր, ուստի պատմեմ եղելութիւնը, այն ատեն պզտիկները srakվէ ընելու չափ պիտի պոռաք, հա՛ս... կը... ցա՛յ... սա՛ կուռնիկը...

Շարաթ իրիկուն է: Օդը ամպամած: Բոլոր գիւղ ելլողները հաւերու պէս երկինք կը նային և որոնց մէջ ամեն անոնք որոնք partie de plaisir մը սարքելու դիտաւորութիւն ունին և կէս մըն ալ պատրաստութիւն տեսած, պատժուած դպրոցականի մը լալկան դէմքերով չէ որ կը միսիթարուին պուլուք կ'անցնի ըսելով և ինչպէս ըսինք միշտ վեր նայելով:

Միւսիւ կուռնիկ դեռ կիրակիի ժամանցը չէ որոշած:

Ժամը տասնին մօտ պեխերը ոլորելով Եէնի-Ճամիի հրապարակէն կ'անցնի՝ պօնօն բոթթէսթօյի գացող պատուաւոր վաճառականի մը պէս արտում ու վարանոտ:

Յանկարծ, քունէն՝ կրակ կայ պօռալու ձայնէ մը ցնցուածի պէս աչքերը կը բանայ՝ երբ դէմ առ դէմ կուգայ կուռնիկոս աղային, որուն հետ ծանօթութիւն ունէր միմիայն Չըռչըռը քով քովի շիշէ մը ջուր լեցնելուն ան առթիւ:

— Բարե կուռնիկոս աղա, ո՛ւր ասանկ վազելով...

— Օ... Ասծուբարին, վաբօրի, վաբօրի տասը թաքքէ կայ, չիյտեմ քի պիտի կրնամ հասնիլ...

— Ո՞ր վաբօրին... կը հարցնէ կուռնիկ ինքն ալ շուարած ու նիքէլ ժամացոյցը ձեռքը...

— Ատային ճանրմ, Գընալը պիտի երթամ, ես՝ քանի օրէ օթէլն ենք...

— Ա՛... մի՛ աճապարեք օրելիս, ես ալ միտք ունիմ այս գիշեր հոն երթալու, այսինչեանենցմէ հրաւիրուած եմ, բայց դեռ ժամանակ կայ... միասին կ'երթանք...

— Ճանրմ նասը՛լ ժամանակ, իմ ոահաթիւ տասը թաքքէ կայ...

— Է՛հ կարելի է իմս սխալ ըլլայ, հրամանեցք երթանք...

— Հա ես՝ երթանք երթանք ըսելով երկուքը մէկ կը հասնին կամուրջ, ուր կուռնիկոս աղա երբ կը պատրաստուի դրամ տալ, ասդին կուռնիկը, ինք գրպանները կը խառնէ մէկ կողմէն քալելով, մինչ մարդուկը արդէն քսան փարան վճարած կշտապէ շոգենաւ:

— Ա՛... աս չեղաւ կուռնիկոս աղա, ինչ տեղը կար... մէռսի...

— Հիմա վազ անցիր ճանրմ, վաբօրը չը փախցունեմ տէ...

Արդէն կղզիներու տասնուկէսին շոգենաւ սուլած, պարանները քակած, շոգիի վրայ էր մեկնելու համար երբ՝ կուռնիկոս աղան, քրտինքը ճակտին, մէճիտ մը կը նետէ կիւեհն, մինչ պաշտօնեան կը հարցնէ.

— Բա՛շ թանէ...

— Հայտէ վաբօռ կիտիյօր... կը պօռան դուրսէն:

— Ա՛խ կուռնիկոս աղա, քսան ֆրանքնոց մը կաւրե՛ն աճապ...

— Ճանրմ հիմա, վաբօռը կելլայ կոր...

Ու կիշէին մարդը տեսնելով որ երկու հոգի են, երկու մեմբի կը յանձնէ իրենց, մինչ Կուռնելիոս ալան շոգենաւը չի փախցնելու համար առանց դիտողութիւն մը ընելու հազիւ ներս կը նետուի ու Կուռնիկն ալ ետեւէն՝ հո՛ր ներս ...

— Էօֆ... քիչ մնաց չէինք հասնէր կոր, կըսէ մարդուկը քրտինքը սրբելով, պիլէթձին ալ գիտէս քի չաչըրմիշ ըրաւ ...

— Ախ ... բայց այսքանը չըլլար Կուռնելիոս աղա, խօսք կառնէ Կուռնիկ, երախտապարտ կը կացուցանէք զիս ...

— Ճանճմ դուռն ալ թօհաֆ էս, չորս զրուշի համար հիշ ֆուանսըզ կաւրէ՞ ... Նէ իսէ իշտէ եղաւ լմնցաւ, չէնէ դուրսը պիտի մնայիր ... Էհ, սանկ նստինք, զէրէ քրտընած եմ, ըսելով երբ քամառան մտնալ կուղէ, Կուռնիկ արգելելով,

— Բայց սխալ է ձեր ըրածը, վեր ելլանք վեր, արդէն հովը կռնակնուս է, բնաւ չի դպիր, վեր ելլանք ...

— Ճանճմ, քրտնած եմ նստը վերը նստիմ, ետքէն պաղիմ նէ ...

— Բնաւ երբէք, դուք հետս եկէք, ըսելով սանդուխներէն վեր կելլայ, մինչ Կուռնելիոս աղան ակամայ իրեն կը հետեւի մըրմըրալով,

— Չօք չէ՛յ ... պէ պապամ քրտնած եմ միւսիւ, կը պաղիմ ...

— Հոգ չէ սիրելիս, մէջտեղուանքը տեղ մը կը նստինք, չըլլայ նէ ոտքի վրայ կը կենանք, կը պատասխանէ Կուռնիկ, ուղեւոր վայելել կանացի աշխարհը և վերի թէռասը:

— Հիշ պէօյլէսինիտէ կէօրմէմիշ իտիմ, հէմ պիրէ իքի գաթ փարայ վէրտիք, հէմ տէ իքի թաւաֆը սաթըլըճանը տավէթէ կիտիւօրըզ ...:

Հոս չպիտի ըսենք թէ Կուռնիկ չոր «մէռսի»ով մը տոմսակը գրպանելէ վերջ հոս հոն կը պտրտէի, անոր ասոր բարեւ կուտայ ըստ սովորականին ու կսկսի ալքտկալ այն ընտանիքներուն մօտ՝ որոնց դէմքը ու թուակէթը իր արտոքակը կը սրեն, ասոքին միս մինակը ձգելով Կուռնելիոս աղան, որ ծխնելոյզին ետին կծկուած անծանօթ մէկու մը երեսէն ինքզինքը կը պաշտպանէր ֆիեվըր քիժօթէն, որ իր շուրջը կը դառնար անխնայ:

Շոգենաւը Գրնալը հասնելուն, ամբողջ տալաւաւսեռը լեցուն է գոյն զգոյն թուալէթներով, որոնք եկած են հոգ իրենցինները դիմաւորելու, բոլորն ալ թաղէ բուռաւը, քրտինք չի հոտելու համար Բօստիկանի հինգնոց քօլօնելով պանիօ ըրած, մազերնին թաց, վերջապէս թարմ ու եէնի քօբարըմըշ նազէնիմներ, որոնք pate hygieniqueով մաքրած ակռաներնին ցոյց կուտան, ոմանք իրենց նշանածին, ոմանք ալ իրենց ... ամուսնոյն «կըմ կընեմ հա՛ ...» և կամ «խածնեմ նէ կտորը կը փրցնեմ հա՛ ...» ի սպառնալիքը կրկնելով գոգցու:

Կուռնելիոս աղային ինքնակոչ բարեկամը երբ կը տեսնէ թէ շոգենաւը նաւամատոյց հասաւ, իսկոյն իր բեռքաքին ձգելով մօտը կուգայ,

— Ախ, ներեցէք, այնքան շատ ճանչուորներ կան որ, նոյն իսկ կարելի չեղաւ մէկ ժամուան մէջ բոլորին ալ դոհացում տալ ... միւսակ մնացիք ներեցէք ...

— Հոգ չէ ճանճմ, եկանք զաթը ամա, կռնակս ի վար պաղ պաղ կիջնայ կոր, կըսէ մարդը ուսերը վեր քաշելով, առանց գիտնալու թէ՛ դուրսն ալ թէփէն ի վար տաք տաք պիտի իջնար վերջը:

Ահագին բաղմունքիւն մը դուրս կը խուսէ շոգենաւէն, քատուրի անկաթէի պէս բոլոր քավալիէները կերթան իրենց տաման գտնել, և ընդհանուր խրախճանութեան մէջ կղզին նոր թափ մը, նոր ոգեւորութիւն մը կառնէ կարծես:

Կուռնելիոս աղա ձեռքի բաքէթներովը ծանրաբեռնուած ան ալ իր կարգին դուրս կելլայ, միշտ ինքնակոչ պոչիկը ետեւէն ...

— Օ՛ ... մերիններն ալ հոս են եղէր ըսելով՝ Կուռնելիոս աղա չիտակ իրեններուն մօտ կերթայ, Կուռնիկն ալ ետեւէն, իբր թէ բաշա բաշա հրաւերով՝ հազիւ ձեռք ձգած մէկ սիրական հիւրը ըլլար:

— Բարի իրիկուն ձեզ, կանուխ եկայ հէ՛ ...

— Ասծու քարին ըսելով կինը, երկու աղջիկները, ինչպէս նաեւ ուրիշ հիւր կին մը, բոլորը մէկ Կուռնիկին կը նային ապուշ ապուշ, մինչ սա պերսերուն տակէն օձի ժըպիտ մը շինելով՝ ժամացոյցի տակէն կախ-

ուած պէպէքի մը պէս հասլըռէ Ռեվիռաւնս կընէ ու կը կոտորտուի:

— Աֆ կընես միւսիւ, անունդ ալ չիյտեմքի բռեզանքի ընեմ քեզի մերիններուն ...

— Կուռնիկ Բակաւեան, քովսիօնէն, կիրէն չըզմաղեան 100 թիւ ...

— Իշտէ թէքբար ընելու բան չիկայ, հասկըցաք ես ով ըլլալը, մէկտեղ մը տեւած եմ ամա՝ միտքս չէր ի գար կոր, նէ իսէ միւսիւն կէնէ միտքս ձգեց, սա ո՛ւր է, չորս հինգ տարի առաջ օր մը Ձըրչըրն էինք տէ ջուր լեցունելու համար վարի չէշմէն գացի, հոգ տեսայ տէ չիշէս լեցուց, անկէ պէրի մէյ մըն ալ աս իրինկուն քէօրըիւին վրայ տեսայ, ինքն ալ Ատա կուգայ կոր եղէր մէկտեղ եկանք ...

— Օ՛ շատ աղէկ, ըսել է հոս աղգական ունիք, կըսէ տիկինը ...

— Այո՛, ո՛չ ... սակայն, գրեթէ, ը՛... քանի որ ... անոյ ... արդէն ... ու կըսկըսի կոտորտուիլ ...

— Էյ տո՛ւն երթանք չէնէ մի ստեղը նստինք քիչ մը, խօսք կառնէ Կուռնելիոս աղան, ձեռով մը ճամբու դնել ուղեւով իր ինքնակոչ հիւրը, յուսալով թէ ալ մնաս բարովը պիտի դնէր ի հարկէ ...

— Դուք գիտէք, սակայն շա՛տ լաւ կըլլայ եթէ սա տեսաւաճեալին զբօսարանը քիչ մը նստելու ըլլանք ...

Օրիորդները իրարու երես կը նային, տիկին Բերսաբէ ամուսնոյն ականջն ի վար,

— Ո՛վ է աս ... չարչիէն կը ճաշնաս կոր ...

— Չէ պապամ, իշտէ ըսինք ես, օր մը Ձըռչըրը քովէ քով չիշէ լեցուցինք, ան սըռըթմիշ ըրաւ, ես ալ պաղ է թաղէ է ըսի, անկէ ետքը երեսը տեսած չունէի, տեսնայի ալ նէ չէի ճանչնար, Փախաթ աս իրինկուն նասըլ եղաւ մէյտեղեցանք ...

— Չօք չէյ ... քա հիմա տեսնողները ի՞նչ պիտի ըսեն, սաղլամ Արտէմը նշանեցին տէյի հավատիս մըն է պիտի ելլայ, նասըլ ընենք տէ պոծինք ...

— Կայնէ նայինք, բէք պաղուծին ալ ընելու չի գար, վրայէն նայիս նէ չնորհքով մէկը կերեւայ կոր ...

— Հրամանեցք Կուռնելիոս աղա, հոս,

աս կողմը ծովուն դէմ, աւելի հանգիստ կընեն կարծեմ, կըսէ միւսիւ Կուռնիկ, աթոռները իրար անցընելով, և այնպիսի ձեւ մը տալով իր շարժումներուն, որ կարծես թէ՛ վեց ամսուան նշանած մը ըլլար:

Կառսօնը կը մօտենայ ու հրամանի կըսպասէ:

— Ի՞նչ կառնէք միւսիւ ... անունդ ալ չիյտեմ ամա աֆ կընես, կըսէ Կուռնելիոս աղան, ձերմակ թաշկինակը վիզին խիմելով:

— Ա՞ ... ինձ համար ինչ որ ըլլայ, բայց չեմ գիտեր թէ օրիորդները, տիկինը ... ը՛...

— Պիղէ պիւր չիշէ տիւղ, պիւր աղ մէղէ, իքի թանէտէ պիւռա կէթիր ... կըսէ աղան կարճ կապելու համար:

Հրամանը կը կատարուի, ճնկելաբանու թիւնները կը շարունակուին, ինչպէս նաեւ թեթեւ մօտութիւններ մը կսկսին ծայր տալ միւսիւին և օրիորդներուն միջեւ: Միւսիւ Կուռնիկ ըստ իր տիրող բնոյթին, մէկ կողմէն ախորժաբեր խօսակցութիւնները կը շարունակէ, կը խմէ, կուտէ, կը խօսի, կը խնդայ, մէկ տունուորի պէս:

Տիկինը մէկ միջոց մը ամուսնոյն մօտենալով,

— Ինձի նայէ Կուռնելիոս աղա՛ ... աս աղան հիշ երթալու միտք չունի, մութցաւ տահա ծանրը բոլոր նստեր է ...

— Հա ամա, Ինձի կուգայ քի, օթէլ պիտի երթայ ...

— Ո՞ր օթէլը, մե՞րը աճապ ...

— Դո՛ւն ինչ կըլլաս կոր, քեզի ի՞նչ կըլլայ կոր չօգ չէյ ...

— Բա ճանը՞մ, նասըլ ինձի ինչ կըլլայ կոր, չի ճանչցած մարդս ի՞նչ աէյի պօչի պէս ետիս թախմիշ ընեմ տէ օթէլ տանիմ ...

— Բա քեզի ո՛վ կըսէ կոր քի տար տէյի, աղան պէլքի մեղի իքբամ ըլլայ տէյի հոս հրամցուց, չիւնքիւ վարօղին փարան ես սուի եաղըչութենով ...

— Հապա՞ ... հիմա տուաւ, հէրիֆին ճէպէն թիւթին մը հանելը չի տեսայ որ սա հաթէ, խուծիդ տիպ եղաւ ...

Նոյն միջոցին կառսօնը երբ կը կանչուի հաչիւ պահանջելու համար, մեր միւսիւ Կուռնիկը ինքզինքմէն ելած տաքօրէն խօսակցութեան մը կը բռնուի օրիորդներուն հետ ...

— Պաշտանայ կառսօն, քա՛ն գուռուշ պօռճումուզ ... կը հարցնէ Կուռնելիոս աւազան, մինչեւ Հէյպէլի գացող ձայնով մը, մինչ միւսին,

— Ախ չէք գիտեր օրիորդ, արդի գրական հանգամանքները որչափ խճողուած են... Ը... արդէն գրագէտ անունին համապատասխանող անձնաւորութիւններ չատ ցանցառ թիւ մը կը կազմեն, և ... պէտք է ըսել որ, ներքեցէք որ ըսեմ, այո՛, այսինքն, ըսել կուզեմ որ ... (Ֆէսը կը հանէ և ալ աւելի ոյժ կուտայ խօսքին), այո՛, մենք ունինք գրագէտներ, որոնք ... և այսպէս կը շարունակէ խօսքը, մինչ աղան արդէն շատոնց վճարած է գրամը և ոտքի կըլած մեկնելու համար,

— Հայտեցէք նայինք աղջիկներ (մասնաւորելով խօսքը իրեններուն) օթէլին զանգալը զարկաւ ...

— Ա՛... ըսել է մեկնելու ժամը եկած է, ուրեմն մեկնինք կըսէ միւսին ու հեռուն կայնած կառսօնը կանչելով ...

— Պաքսանա՛յ, նէ տիր պօռճումուզ, ու գրպանները խառնելով ...

— Վէրիլմիշ տիր միւսիւ ...

— Ա՛... այս անգամ իրաւ չեղաւ, ճըշմարիտ վշտացայ, (ու մէկ կողմէն ֆէսը կը դնէ, գաւազանը ձեռք կառնէ) հաւատացէք որ չեղաւ Կուռնելիոս աղա, շիտակը ըսելով շատ վշտացուցիւ զիս ...

Կուռնելիոս աղա առանց պատասխան տալու քիչ մը տեղ կը քալէ ու խօսք կառնէ,

— Ինծի նայէ միւսիւ, ո՛ւր պիտի մնաք անչէ՞ ամա ...

— Քանի որ դուք օթէլը կը կենաք, հարկաւ մաքուր է, ուստի ես ալ այդ օթէլը նախընտրեցի ու հոն կերթանք միասին ...

Տիկինը ամուսնոյն բէշէն կը քաշէ ու ամէնուն դէմքը խանթար թօփուի պէս կը կախուի:

Հիմա բոլորը մէկ ներս կը մտնան, սեղանը պատրաստ է, շատեր նստած են, մինչ օթէլին կառսօնը Կուռնելիոսէն հիւրը կարծեղով, միւսիւին ձեռքի գաւազանը կառնէ ու շիտակ վեր յատուկ սենեակ մը կը տանի, առանց բան մը հարցնելու, ու ալ կը նստին ճաշի, միւսին ալ միասին, ճաշը թէեւ ու-

րիշներու համար շատ զուարթ կանցնի, սակայն Կուռնելիոս աղայէնց համար շատ անհամ ու սրտնեղութիւն կը պատճառէ, մինչ միւսիւ Կուռնիկ ախորժակով կը լափէ պընակները, ատեն ատեն խօսակցելով իրենց հետ:

Ճաշէն վերջ սուրճ, պարտէզը նստիլ, կրկին խօսակցութիւն, և այս անգամ ալ աւելի մտերիմ:

Պահ մը տիկինը իր ամուսնոյն ականջն ի վար:

— Մըրըներուս կը դպի կոր սա միսաֆիրդ, ուրկէ՞ ալ գտար մարդ Աստուծոյ ...

— Սուս եղիր քա, զաթը արուսներս զլոխս ելաւ, կեղւամ պաղ բան մը կընեմ... իշտէ եղաւ ... տահա՞, էօլիւմ չէ՞ եա ... չօդ շէյ ... օթէլը եկաւ, առտուն փարան տայ ճէհէնէմ ըլլայ երթայ պիտի, հիմա ինտոր ըսեմ քի մեզ ձգէ տէ քաշուէ տէյի...

— Աս տղուն կիսիշաթին նայիս նէ մէզառ թաշի կարեցաւ, խըբուտամիշ ընելիքը չիգայ, հէմ ալ չուլթուլթումազ է գիտես քի...

— Չէ՞... քովը ֆրանսըզ մը ունի, աւրել կուտար կոր չաւրեցին ...

— Էյ դուն տեսա՞ր ֆրանսըզը ...

— Սուս եղիր կընիկ, ըռախիին ուռուֆը պէյնիս կը զարնէ կոր ...

Մինչ այս՝ մինչ այն, միւսիւ Կուռնիկ իր անուանակիցին շքով կը շքաւորուէր առանց մէթալիկ մը մօխելու: Կեր ու խում, զըօսանք, օդէլ, պտոյտ ei pardessus le marché երկու հատ ալ մատմազէլ, որոնց հետ լաւ ժամանակ կ'անցնէր գիշերուան լուսինին:

Ննջելու ժամը եկած էր ալ: Բոլոր օթէլաբնակ յաճախորդները կամաց կամաց կը քաշուին իրենց սենեակները ու մեր միւսիւն ալ հրաժեշտ առնելով իրենցերէն (°) կը մեկնի ու կը քաշուի սենեակ, մինչ վարը,

— Էօֆ ... հէլէ տէֆ եղաւ պէ ... պէ ախպար աս ինչ փորձանք է եղէր թէրպիյէլի ըլլալը, մեր տեղը պաշխասին ըլլայ նէ քունցուրը դրած էր հիմա, ըսելով իրենք իրենց քիչ մ'ալ կը խօսակցին սւ կ'երթան ննջել իրենց սենեակները:

Առաւօտուն կանուխ միւսիւ Կուռնիկ՝ մէկ թելի վրայ հագուած սենեակէն դուրս կը պոթկայ ու զինք զիմաւորող սպասաւորին՝

— Մնաք բարով, աներս Կուռնիկոս աղային ըսէք որ՝ առաջին շոգենաւով գնաց...

— Շատ աւ միւսիւ, իրիկուն պիտի գա՞ք չի գա՞ք... բան մը ըսի՞մ...

— Ոչ ոչ, ես զինքը կը տեսնամ մաղազան ըսելով կծկը կը դնէ շիտակ նաւամատոյց, ուր նախորդ իրիկունէ հանդիպած մէկ բարեկամին ալ նոյն քսան ֆուանքնոցին մասալը կարգաւոր, շոգենաւ կը նստի ու ճամբայ կելլէ ճիշդ ա՛յն միջոցին, ուր Կուռնիկոս աղան և տիկինը, դէմ դիմայ կաթ կը խմէին ու սպասաւորն ալ կը խօսէր.

— Երէկ իրիկունի ձեր մուսաֆիրն ասա՛ց ուր է՞նչի բամբուռով գնացի...

— Հէ՛, նասըլ մեր միսաֆիրը, կ'ըսէ Կուռնիկոս և այնքան դող կ'ելլայ որ՝ ձեռքի կաթին քսար վար, իսկ գլխուն քսան ալ վեր կը թռին... Ծ'ո՛ նասըլ միսաֆիր, ինծի՛ ինչ...

— Նասըլ աֆէնտիս, ձիւղի հետ ներս մտաւ, նստաւ կիւրաւ, խմիկց էսօք պախճան էլ միտանդ ճումպուշ արեցիք վէ հիմայ կասիս ուր իմ միսաֆիր չի...

— Բա տեսար կերած ապուրը՝ ծունը գլխուս. պէ մարդ, ո՞վ էր ատ հերիֆը քի մեղի ասանկ առգալսը դրա՛ւ նէ... քա ասի՛նչ չաշխրնութիւն է...

Կուռնիկոս աղա կը պապանծի, կեանքին մէջ առաջին անգամը ըլլալով հանդիպելուն համար նմանօրինակ տիւպարայի մը որ զինքը չէշին դուռը մարս ըրած էր...

* * *

Կուռնիկոս աղայի ծախքը.

Կամուրջ	10	փարայ
Շոգենաւ	3 զրշ	10 »
Ըմպելի	5 »	30 » միայն անոր հաշիւ
Օթէլ	27 »	
	36 զրշ	10

Կուռնիկին ծախքը.

Լուսթոս պոյա	20	փարայ
20 հատ ճէվիդ իշի	20	»
	40	փարայ

Չէ՛ք հաւատար... իշալլահ գլխինդ կուգայ, և այն ատեն կը հաստատէք ու կը հաւատար թէ երբե՛ք երբե՛ք սուտ չիօսիր ու մտացածին բան չի գրէր՝

ԼԻԼԱ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ գործնական կեանքի պահանջներուն համապատասխանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը և բնիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւելցած է, Զուգեցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր յոյժ տալու համար նաև Ֆրանսերէն լեզուին:

Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանեկան կատարելալ խնամք վարժարանին մասնաւոր բրժիշկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմիջական հսկողութեան և Տիկին Չէմպրէսի մայրական խնամքներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր (Ն. Տ.) Դշ. Գիշերօթիկներուն տարեթուական է 16 Օսմ. Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. ին սկիզբը, իսկ քսանցեալը՝ Յունվարի մէջ, Գործիական երաժշտութեան դասին համար կը պահանջուի տարեկան մէկ ու կէս Օսմ. Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն Հայտարարաւորուիլ կէս գնով ճամբորդել, պէտք է դիմեն Գրիգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի կամ Վարժարանիս Պոլսոյ գործակալատար Դր. Էֆ. Շահպաղեանի, Պայպլ-Հատու, Կ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան, Պարտիզակ, 10—5

ՀԱՅՈՒՂՆԵԱՑ ՎԱՐժԱՐԱՆ

Ա Տ Ա Բ Ա Զ Ա Ր

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիրիկներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաև ընտանի, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեւագիտութեան, կարի և ձեւագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթուական է 12 Օսմ. Ոսկի, որուն կէսը պէտք է հաստուցանել տարեշրջանին սկիզբը, և կէսը ծնողեան արձակուրդին: Դաշնակի և երգեսանի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օսմ. Ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 11 ին (Ն. Տ.) Դշ. իրիկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարանին յայտագրերը, կամ դիմել Մր. Բիթի, Պայպլ-Հատու Կ. Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատեհնապետ խնամակալութեան, Առաքաղար: 10—6

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱԼԱԹԻԱ. — Հոս հաստատուած ծա-
նօթ երիտասարդ մը, որ այս տարի Պէօյիւք-
տէրէ օղափոխութեան գացած է, կը լսենք
թէ՝ շողենաւին մէջ հովէն պատապարուելու
համար՝ ժիլէին տակէն հաստ թուղթերով
մարմինը ամպալած կ'ընէ եղեր ամեն իրի-
կուն: (Վրան ալ « fragile » գրելու չի մոռ-
նայ... Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ասկէ առաջ գրած
էինք թէ՝ Ատաբաղարի մեր ծանրաձեռն բա-
ժանորդներուն թերթերը պիտի դադրեցնենք
եթէ չվճարեն: Իսահապէք ըսելով և ոչ մէ-
կը հաճեցաւ հաշիւը մաքրել՝ ու մենք ալ
արդէն չէինք զրկէր: Յաւալի է ըսել թէ
Ատաբաղարի պէս տեղ մը, այս աստիճան
առաւ փախաւներ կը գտնուին և որոնց ա-
նունները՝ յաջորդ թիւով պիտի հրատարա-
կենք իբր նմոյշ:

ՍԿԻԻՏԱՐ. — Տեղացի կիներն ու օրի-
որդները, ատենէ մը ի վեր երբ կիրակիները
պատոյտի կ'ելլան, բուտրա չեն քսուի կոր,
նկատելով որ այդ գործը, տեղւոյն փոշին
լի ու լի կը կատարէ կոր՝ փչող հովէն տար-
ուբեր: (Ուշադրութիւն ըրէք որ չբրտնիք,
վերջը դէմքերնիդ քերէ՞՞ օճաղի կը դառ-
նայ... Ծ. Խ.):

ՍԱՌԸՆԱՐ. — Անցեալ իրիկուն, չիքու-
թիւնը պատանքի պէս յարմարցնող օրիորդ
մը, երբ Բազար պաշի վեր վար պոյ կը ցու-
ցնէր, ժիւրը վար իյնալով տակի տալլը
պատմա գիշերնոցը en flagrant délit ի հան-
դէս եկաւ: (Արտաքինէն խաբուղներուն աչ-
քը լոյս: Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻԻԴ. — Եկեղեցւոյն բակը, կի-
րակի առաւօտ պզտիկ չանթա մը դանուած
է, որուն մէջ կծիկ մը բուտրա, աղտոտ
տանտը մը, մազ փեթթելու ճըմպըզ մը և
110 փարայի մանրուք կայ եղեր. կը հրա-
ւիրուի դիմել բանկալը կամ ժամկոչ աղբօրը:

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Կարգ մը բանայիրճի-
ներ Աստուածածնայ տօնին առթիւ հոս դի-
մելով փոխանակ զբօսնելու, բոլորն ալ հա-
ճամաթ եղան խուլրուխու սիվրիսինէկներէն,
որոնց համար տեղւոյս փորձառու քահանայ
բեմէն խրատեց հապըռէ թուք քսել:


ԹԱՇ-ՏԷԼԷՆ. — Բանայիրի ներկայացու-
ցիչ միւսիւնները հոս այնքան յուզուեցան
սալուլէն, զուռնայէն և սիւմպէլէկէն, որ
մազ մնաց յիմարարուծի մը պէտքը զգալի
պիտի ըլլար եթէ Սառք-Էարէն փչող սէրք
հովը չաթափեցնէր զիրենք:

ՆՈՅՆ. — Յիշատակութեան արժանի լու-
րերէն մին ալ աւանդական ֆէշի-պաւիկն էր,
որ կուշանար ու կուշանար 5էն 12, կերե-
ւայ թէ բոսպոլան ալ բուռէն աւելի զլուխը
տաքցուցած էր, ու ծանօթ պաւեն ալ իր
պաւին մէջ հիւած ...:

ՍԿԻԻՏԱՐԻ ՇՈՂԵՆԱԻԷՆ. — Ալէմտա-
ղիի ուխտէն դարձող ընտանիքէն կը խնդ-
րուի, ուրիշ անգամ պզտիկ պէպէքներու
յատուկ աճող պտղոցնէլ հետերնին և ոչ թէ
ի տես ամենեցուն շառ շառ շառ ջրել տան
շողենաւին վերի թէռասը:

ԱՆՄԵՂ ԶԲՕՍԱՆՔ

ԼՈՒԾՈՒՄ



Մեզ հասած 137 լուծումներէն ճիշդ լու-
ծած է միայն Սկիւտարէն Օր. Բերկրուհի
Մինասեան, որ այս շաբթուրէն սկսեալ
կատանայ երեք ամիս Հանքագիսակ:

Կը խնդրուի Պոլսոյ կողմը հասցէ մը
ցուցնել:

Ursoğuskr ԱՐՄԷՆ ԼՈՒԾՈՒՄԵԱՆ

ՏԳՍԳՐ. Ե. ՍԱՏՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Գ ԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսներով եւ գիններու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ձոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—49



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեւալ պէյ խանին
հալ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճապէս եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ԿՈՒՉԷՔ ՍՏԱՆԱԼ ԶԵՐ ՈՒՉԱՆԸ ՓՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՎ ՈՒ ԱՆՍԻՆԱԼ

ՕՐԷ ՕՐ ԿԸ ՄՈՏԵՆԱՅ

ԴՊՐՈՑԱՅԻՆ ՆՈՐ ՇԵՐՏԵՐ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐՆԱՔ ՊԷՏՔ ՈՒՆԵՆԱԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԴԱՄԱԳՐՔԵՐՊԻ՝ ՈՐՈՖ ՎԱՆԵՐԱՅՈՒՄ
ԸՍՏԱՆ ՊԱՏ. ՈՒՍԱՆ. ԽՈՐՀՐԴԷՆ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՍՏԻՊՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՊԻ՝ ՈՐՈՖ ԸՍՏԱՆ
ՎԿԱՅԵԱԼ, ԿԱՐԿԵՏ ՈՒ ՓՈՐՃԱՌՈՒ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԶԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԵՐՊԻ՝
ՈՐՈՖ ԳՆՈՎ ԱՃԱՆ ԸՍՏԱՆ ՈՒ ՏԵՍԱԿՈՎ ԼԱՄԱՊՈՎ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ ՇԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹԵՐՊԻ՝ ՔՈՒԽՔ, ԳՐԻՉ, ՄԵԼԱՆ,
ԿԱՐԱՄԱՐ, ՄԱՏԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՏՐԱԿ, ԲԱՐԻՉ, ԲԱՐԵՍԱԽԱՆ,
ԿԱԼԻՆ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՄԱԳԱՆ ՄԵՆԿԵՐ ԵՆԻ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷՒ Է ԳՈՐԾ՝ Ի ՄԸ. ՎԿԱՅԿԱՆ, ՎԻՃԱԿԱՅՈՎ, ԲԱ-
ՐԵՆԻԷ, ԿԱՏՈՒԱՆԻԷ, ԿԱՅԱԲԱՐՏ, ԵՂԱԲԵՐԱԿԱՆ, ԳԱՄԱԿԱՊՈՒԽ
ԿԱՄԱՐԱՆ ԵՆԻ: ԻՆՉ՝ ՈՐ ԱՂ ԸՍՏԱՆ ԿԱՅԿԱՆ ԴԵՐ ՎԵՏԵՐ, ԲԱՍԿԵՐԲ
ԱՆԳԱՄ ՄԸ ՅՈՎԱՆՆԵՒ ԵՆԻՎԵՆ ԴՐԱՍԱՆ ԿԱՅԿԱՆՆԵՐ
ՎԱՍԱՆ ԸՍՏԱՆ ԵՂԱԲԱՐԱՆ ԿԱՅԻՔ ԸՍՏԱՆ, ԲԱՆԻ ՈՐ ԵՂԱԲԱՐ
ԱՌՔԻ ԱՄԵՆ ԵՆԻՎԵՆ ԿԱՍԱԳՐԵՐԵՆ ԵՆԻ ՈՒ ԵՆԻ ՎԵՐԵԲ
ՄԸ ԱՆԵՐԱՆ Է ԱՐԴԵՆ ԵՂԱՎ ՏԵՍԱԿԱՆՆԵՐՈՆ ՎԵՐԱՅ. ԻՆՉԱՂԵԱ ԳԱՆԸ
ՃԵՆԱԳՐՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ ՈՒ ՏՂՈՐ ԳՆՈՒԵՐ ԲԱՄԱՐ ԱՌԱՏՆԻՔ:

Հարցուցէ՛ք՝ ո՞ւր անմեղապէս պիտի պատահանուի
ապապրեցէ՛ք՝ ո՞ւր պիտի ստանաք զոր օրին

ԼԱԿԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԶԵՂԶՈՎ

ԿԱՆԻԽԿ ԳՈՐԾԱՌՈՒՆԹԻԻՆ

ԴՐՄԵՑԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՍԱՆԵԱՆ ԽԱՆ ՕՀԱՆՆԵՒ ԷՍԿԻՆԱՆ ԳՐԱՍԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Յ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
ԽՕՕՕԻ ԱԻԵԼԻՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմաաւեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուէններու սկզբնատառով գոհարադարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուններ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժա-նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

50—38

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱՏՔ-ԳԻՒՂ, ՄԷՕԴԻՒՐՏԱՐ
ԳԱՏՏԷՍԻ.

Յրդ Տարեցում

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումնարանէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սեղալարժութեամբ (բռարիֆ), ինչպէս նաև Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսչուհին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շբ. օրերը ժամը 5-էն 9 զիմելով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նորխան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ.